ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

Վերապատրաստվող՝ Ջուլիետա Սարգսյան Ռուբենի

Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի մանկապարտեզ

Վերապատրաստող՝ Թագուհի Գասպարյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն ----------3

ԳԼՈՒԽ 1. Համընդհանուր ձևավորումը և ներառումը----------4

1.1 Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատվելուց հետո ---------- 9

ԳԼՈՒԽ 2. Փորձարարական հետազոտություն ---------- 14

Եզրակացություն ----------17

Գրականություն ----------20

Ներածություն

Թեմայի արդիականություն։ «Համընդհանուր ձևավորում» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը։ Հայտնի են նրա հետևյալ խոսքերը՝ «Համընդհանուր ձևավորումը արտադրանքի և միջավայրերի նախագծումն է բոլոր մարդկանց օգտագործման համար, հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների անհրաժեշտությունը»։ Մեյսը անվասայլակով էր տեղաշարժվում և անվերջ խնդրում էր, որ շենքերում ապահովվի ֆիզիկական մատչելիությունը։ Ի վերջո, նա առաջարկեց շենքերը նախագծելիս հաշվի առնել մատչելիության հանգամանքը՝ խնայելով ժամանակ, գումար և բարելավելով բոլորի կյանքը։ Լայն իմաստով, ճարտարապետական համընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել անխտիր բոլոր շինությունների մատչելիությունը անխտիր բոլորի համար։ Սակայն համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ճարտարապետությունից զատ այլ բնագավառներում։ Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա։

Նպատակ։ Վերլուծել և ներկայացնել համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում։

Նպատակից բխող խնդիրներ։

1. Գիտամեթոդական գրականության ուսումնասիրում
2. Գործնական պարապմունքների վերլուծություն
3. Պարապմունքի ներկայացում։
4. Արդյունքների ամփոփում

Գիտահետազոտական մեթոդներ։ Դիտում, անկետավորում, վերլուծություն։

ԳԼՈՒԽ 1. Համընդհանուր ձևավորումը և ներառումը

Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողներին՝ որպես «սովորական» ու «առանձնահատուկ» երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ, համընդհանուր ձևավորումը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես «լավ դասավանդումը»:

Ըստ Էդիբերնի (2010), համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան: Սակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՈՒՀՁ-ն կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև: Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին:

Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (Միավորված ազգեր, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը:

Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ դաստիարակը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար:

Ստորև ներկայացված են դաստիարակների կողմից դասասենյակներում ճկունություն հանդես բերելու լրացուցիչ օրինակներ (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համընդհանուր ձևավորման օրինակներ

Նյութի մատուցման բազմազան միջոցներ	Արտահայտվելու բազմազան միջոցներ	Ներգրավման բազմազան միջոցներ
Փորձառություն Թատրոն Տեսահոլովակ **Համատեղ փորձառություն** Նկարներ Կոնկրետ ներկայացումներ (օրինակ՝ լեգոներ, խորանարդիկներ, մոդելներ) Սահիկաշար Յուրացման նախապատրաստում	Թատրոն Արձագանքի քարտեր Արվեստ Բանավոր արտահայտում Շարադրություններ Բանաստեղծություններ, երգեր **Հասկացությունների քարտեզագրում**[2] Նշումների կատարում Սահիկաշար **Յուրացման նախապատրաստում** Փոքր խմբով քննարկում **Փոխադարձ ուսումնառություն** Հանդիպումներ ուսուցչի հետ Ներկայացում դասարանին Ֆրեյերի մոդելը[3]	**Փորձառությամբ սովորել** Ընտրություններ **Ինքնագնահատում** **Փոխադարձ գնահատում**

ՀՀ կրթության մասին օրենքում, երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող տարբեր համաձայնագրերում և փաստաթղթերում տեղ են գտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ իրենց մյուս հասակակիցների հետ համատեղ կրթություն ապահովելու կարևորագույն հիմնահարցերը: Այսօրվա քաղաքականությունը խրախուսում է այն միջոցառումները, որոնք կնպաստեն վերացնելու հասարակության տարբեր խմբերի միջև առկա մեկուսացնող սահմանները և ստեղծելու պայմաններ կրթությունն ավելի ժողովրդավար և հանդուրժող դարձնելու համար: Կրթության համակարգում ձեռնարկվել են համապարփակ բարեփոխումներ, որոնք սկիզբ են առել բոլոր ոլորտներում՝ մասնավորապես նախադպրոցական հաստատություններում: Իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հասակակիցների հետ հանրակրթական հաստատություններում սովորելու գործընթացը, որն ուղղված է նրանց սոցիալականացման ու հասարակական կյանքին ներգրավվածության ապահովմանը: Կարևոր հանգամանք է նաև, որ հոգեբանամանկավարժական միջամտությունը թույլ է տալիս ձևավորել անհրաժեշտ հմտություններ՝ անձի անհատականության և նրա կարողությունների լիարժեք զարգացման համար: Այս իմաստով կարևորվում է այն դրույթը, որի համաձայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

երեխաների սոցիալականացման առաջին փորձն արդյունավետ է սկսել նախադպրոցական տարիքից և նախադպրոցական հաստատություններում: Մեր օրերում հաճախ է հանդիպում «հատուկ կարիքներով երեխա» արտահայտությունը: Ովքե՞ր են այս երեխաները, ի՞նչ են «հատուկ կարիքները» և նման այլ հարցեր են ծագում այս կապակցությամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն այն երեխաները, որոնց զարգացումը շեղվում է այսպես կոչված «միջին մակարդակից»: Դա ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում նրանց ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների ու բարոյակամային որակների ձևավորման վրա: Շեղումները կարող են սկսվել երեխայի զարգացման ցանկացած փուլում, սկսած ամենավաղ՝ էմբրիոնալ շրջանից:

Դրանք կարող են լինել տեսանելի կամ անտեսանելի:
Ընդհանրացնելով ասենք, որ «հատուկ կարիքներով երեխաներ» ձևակերպման տակ այժմ հաճախ դասում են և՛ սակավամիտ, և՛ հաշմանդամ, և՛ բարձր օժտվածությամբ երեխաներին:

Ընդ որում, «հատուկ» բնորոշումը վերաբերում է երեխայի կրթական պայմաններին ու կարիքներին: Այսինքն՝ հատուկ են այս երեխաներին խնամելու, դաստիարակելու և ուսուցանելու պահանջներն ու պայմանները: Տարբեր կարիքներով երեխաներին տրվող համակողմանի օգնության համար ներգրավված են հետևյալ մասնագետները՝

- բժիշկ
- լոգոպեդ
- արատաբան
- հոգեբան
- արտթերապևտ
- բուժական ֆիզկուլտուրայի մասնագետ
- երաժշտաթերապևտ

Մասնագետների այսպիսի ընդգրկումը թույլ է տալիս իրականացնել համակողմանի մոտեցում՝ երեխայի վերականգնողական, դաստիարակչական աշխատանքների և ուսուցման հարցերում: Տարբեր մասնագետների խմբի

գործունեությունը ներառական նախադպրոցական հաստատություններում հանդես է գալիս որպես միասնական համակարգված ներգործություն, որը ձեռք է բերվում թիմի միահամուռ ուժերով: Ներառական մանկապարտեզում տարբեր խմբի երեխաներն ըստ իրենց անհատական առանձնահատկությունների կարող են ապրել տարբեր անհատական ռեժիմի պայմաններում, քանի որ նախկին փորձը ցույց է տվել, որ բոլոր երեխաների՝ օրվա նույնանման ռեժիմի առկայությունն արդյունավետ չէ:

1.1 Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատվելուց հետո

Համաձայն ժամանակացույցի հանրապետությունում մեկնարկեց անցումը համընդհանուր ներառական կրթության համակարգին: Այն սկսվեց 2016 թվականին Սյունիքի մարզից, որի արդյունքում՝

• ձևավորվել (վերակազմակերպվել) են 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ,

• մարզում իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության թեմայով, • հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 %-ի հաշվարկով,

• կիրառվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,

• վերակազմակերպված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից իրականացվել է աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց: 2017 թվականի սեպտեմբեր ամսից համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է Լոռու և Տավուշի մարզերում, այդ նպատակով ձևավորվել են Վանաձորի, Ստեփանավանի և Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, ինչպես նաև ձևավորվելու է Վանաձորի կենտրոնի մասնաճյուղը՝ Ալավերդի քաղաքում: Տավուշի մարզում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել են «Հույսի կամուրջ» ՀԿ-ին՝ հաշվի առնելով վերջինիս փորձը ներառական կրթության ոլորտում: Համընդհանուր ներառական կրթության ներկայիս քաղաքականությունը և մեխանիզմները շահեկան են թե կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ մարդու իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է, երբ շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այսպիսով. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն

բացահայտվելու իր բոլոր ունակություններով և դրսևորվելու իր համար հաղթահարելի ձևով: Շեշտը դրվում է երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնել կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու և միջավայր ապահովելու միջոցով: Այսինքն, երեխան ոչ թե ունի «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար: Դրանք կարող են լինել, ֆիզիկական և սոցիալ-մշակութային միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդը և մեթոդաբանությունը, ուսուցողական նյութերի մատչելիությունը և այլն: Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ իր երեխայի հետ հասարակության շփումից, քանի որ նույն հասարակությունը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի անդամի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի գնահատման գործընթացին անմիջական մասնակցությունը, մասնագետների խորհրդատվությունը և հասարակական վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, հաղթահարել անելանելիության ու ամոթի բարդույթը և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը: Միաժամանակ, հաղթահարվում է մյուս երեխաների ու նրանց ծնողների մոտ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքը, նրանց իրավահավասարության, վերաբերմունքի և ուսուցման հավասար պայմանների գիտակցման կարծրատիպերի հաղթահարման տեսանկյունից: Պետությունը աստիճանաբար հաղթահարում է սոցիալական պետության գործառույթն ապահովելու խոչնդոտները, նվազում է հասարակության շերտավորումը, և դրանով հնարավոր է լինում իրագործել երկրի ստանձնած միջազգային հիմնական պարտավորությունները, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու և ոչ թե նախկինում՝ հատուկ դպրոցների միջոցով, սոցիալական խնդիր լուծելու համար: Երեխաների շրջանում իրավահավասարություն ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը: Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե

հարկատու: Հասարակությունը գնում է հոգեբանական առողջացման, նվազում է սոցիալական շերտավորումը, անձի կախյալությունը որոշում կայացնողներից: Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, մինչև 2025 թվականը Հայաստանն անցում է կատարում ամբողջական և համընդհանուր ներառական կրթության համակարգի: Սա նշանակում է կրթության համակարգում արմատական 25 փոփոխություններ՝ սկսած մի շարք իրավական և նորմատիվ կարգերից վերջացրած ընկալումների փոփոխություն: Կա թյուր տպավորություն, թե ներառական կրթությունը նախատեսված է սոսկ ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն համակարգի խորքային ընկալումը փաստում է, որ ներառականությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կամ երեխաների խմբի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկությունների վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքի ապահովումը: Այսինքն՝ եթե ձևակերպելու լինենք ավելի հակիրճ՝ համընդհանուր ներառականության գլխավոր առաքելությունը մեկն է. ստեղծել այնպիսի պայմաններ և միջավայր, որ որևէ երեխա կրթությունից դուրս չմնա:

Անցում կատարել համընդհանուր ներառականության գաղափարին, նշանակում է հրաժարվել առանձին

դպրոցներ ներառական դարձնելու գաղափարից և ամբողջ համակարգը պատրաստել ներառականության, այսինքն՝ հանրապետության բոլոր դպրոցներում ապահովել կրթության կազմակերպման ներառականության սկզբունքի ներդրումը: Սա շատ կարևոր քայլ է, որովհետև ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ: Դա կրթության հատկանիշ է, որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում: Որքան ավելի շատ է դպրոցում ստեղծված կրթական միջավայրը նպաստում յուրքանչյուր երեխայի կրթության կարիքի արձագանքմանը՝ անկախ նրանից, թե այդ կարիքն ինչպիսի առանձնահատկությունների վրա է հիմնված, այնքան տվյալ դպրոցն ավելի ներառական է: Այժմ համակարգը գտնվում է անցումային փուլում, և այս ժամանակահատվածում դեռևս զուգահեռաբար գործելու են ինչպես առանձին ներառական դպրոցները, այնպես էլ հատուկ դպրոցների դեռևս խորհրդային տարիներից ժառանգված համակարգը:

Համընդհանուր ներառականության անցման շրջանակում ներդրվում է երեխայի կրթության կարիքի գնահատման եռաստիճան համակարգ: Առաջին աստիճանի գնահատումը կատարվում է դպրոցում՝ դպրոցի մանկավարժական ներուժի միջոցով՝ ներգրավելով ծնողին և այլ մասնագետների: Երկրորդ աստիճանի գնահատումը կատարվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից, իսկ գնահատման երրորդ աստիճանը իրականացվում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից: «Երեխայի կարիքի գնահատման արդյունքներից ելնելով՝ կազմվում է ուսուցման անհատական պլան: Եթե երեխան ճանաչվում է կրթության առանձնահատուկ միջին, ծանր կամ խորը կարիք ունեցող երեխա, և այդ գնահատականը հավաստվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից, ապա դպրոցն այդ երեխաների կրթության կազմակերպման համար ստանում է լրացուցիչ ֆինանսավորում: Այն դեպքերում, երբ առաջանում են վիճելի իրավիճակներ, առաջին երկու

մակարդակներում արված գնահատման արդյունքների հետ կապված, նախատեսված է բողոքարկման մեխանիզմ. հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպվում է գնահատման երրորդ աստիճանը: Ծնողը պարտադիր մասնակցում է երեխայի կարիքի գնահատման և ուսուցման անհատական պլանի կազմման գործընթացներին:

ԳԼՈՒԽ 2. Փորձարարական հետազոտություն

Օրակարգով սահմանված գործունեության ձևերի հետ մեկտեղ երեխաներն ունեն ազատ ժամանակ՝ զբաղվելու, մեծահասակների հետ շփվելու, ինչը խթանում է երեխայի ինքնուրույնության և ակտիվության զարգացմանը: Այսպիսով, երեխայի ամբողջ ներուժի զարգացմանը նպաստում է նաև այն անձնակազմը, որն աշխատում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներով երեխաների հետ: Ուստի ավելի ճիշտ կլինի, որ յուրաքանչյուր բնագավառի աշխատող որոշ պատկերացում ձևավորի իր աշխատակիցների գործունեության բովանդակության մասին, ունենա երեխաներին վերաբերող բոլոր խնդիրների ամբողջական պատկերը: Բացի
այդ, անհրաժեշտ նախապայման է, որ նախադպրոցական ներառական հաստատություններում ժամանակ առ ժամանակ անցկացվեն միջմասնագիտական փորձի փոխանակման կլոր սեղան և վերականգնողական աշխատանքների ընթացքի մասին միասնական քննարկումներ:

Հայաստանում որդեգրվել է ըստ մարզերի համընդհանուր ներառականության անցնելու քաղաքականությունը: Մարզ առ մարզ ստեղծվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, որոնք պետք է աջակցեն դպրոցներին՝ երեխայի կարիքներին համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու հարցում:

Կարևոր խնդիր է նաև ծնողների ներգրավվածությունը, նրանց միջամտությունը երեխայի զարգացման և դաստիարակության գործընթացին:

Նախադպրոցական ներառական հաստատություններում մշակված ընդհանուր սկզբունքներն օգնում են նոր ընդունվող երեխաների սոցիալականացմանը, սեփական ուժերի, կարողությունների, հմտությունների ողջ ներուժի բացահայտմանը: Օգնության կարիքի դեպքում նրանք կարող են ստանալ բազմակողմանի միջամտություն:

Ներառական կրթությունը մանկապարտեզում իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- երեխաների ներգրավման գործընթաց
- տարածության ներառում
- ներառում՝ ըստ տարիքի
- մասնագետների ներառման գործընթաց

- ծնողների ներառման գործընթաց

Երեխաների ներգրավման գործընթացն սկսվում է նախ և առաջ խմբի ձևավորմամբ կամ տարանջատմամբ:

Այսինքն՝ ընդհանուր խմբի քանակը չպետք է գերազանցի 13-15 երեխան:

Ներառական խումբը պետք է ձևավորվի ըստ տարիքի, զարգացման հապաղումով երեխաների 25%-ի չափով:

Տարածության ներառում/ինտեգրում. սա նշանակում է, որ ազատ օգտագործվում են մանկապարտեզի տարածքը, սպորտային և երաժշտական դահլիճները, բակը, խաղահրապարակը:

Ներառում՝ ըստ տարիքի . խաղերի, ընդհանուր միջոցառումների, խաղաթերապիայի, տոների և այլնի ժամանակ միավորվում են տարբեր տարիքի երեխաներ:

Նշենք այն կարևոր հանգամանքները, որոնց վրա պետք է հենվեն ներառական նախադպրոցական հաստատությունում աշխատող մասնագետները:

Աշխատանքը կազմակերպել հետևյալ սկզբունքով. հատուկ կարիքներով երեխան խմբի լիարժեք անդամ է, ունի միևնույն իրավունքները, ինչ իր մյուս հասակակիցները:

- Հենվել երեխայի ուժեղ կողմերին կարիքների վրա:
- Խմբում ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ:
- Համատեղ պարապմունքներն ու խաղերը կազմակերպել դաստիարակի և հատուկ մանկավարժի հետ միասին:
- Ծնողների հետ հատուկ աշխատանք տանել, հետևել երեխաների համար նախատեսված անհատական ծրագրի իրականցմանն ընտանիքում:
- Անհատական պարապմունքներ անցկացնել նուրբ շարժողականության զարգացման, ինքնասպասարկման, սոցիալական հմտությունների զարգացման ուղղությամբ:

- Անընդհատ հետևել մեթոդական նոր ցուցումներին, համապատասխան գրականությանը:
- Հոգ տանել, որ հատուկ կարիքներով երեխաներին անհրաժեշտ բոլոր ծառայություններն իրականացվեն ժամանակին:
- Դայակի օգնությամբ իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնամքը:
- Օգնել երեխաներին կենցաղային և կուլտուր-հիգիենիկ միջոցառումների իրականացման ընթացքում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա-ների կրթադաստիարակչական աշխատանքների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է ներառական նախադպրոցական հաստատությունների գործունեության մեջ ներգրավել երեխաների ընտանիքներին:

Եզրակացություն

Այսպիսով, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին սոցիալական գիտելիքների պաշարներին և փորձին հաղորդակից դարձնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսուցման ձևերի և եղանակների հատուկ միջոցներ, շփման հըմտություններ, յուրօրինակ մոտեցումներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցման առավել հաջող ձևերից է ներառական ուսուցումը:

Փորձը ցույց է տվել, որ նմանատիպ երեխաներն առավելագույնս զարգանում են հասակակիցների միջավայրում, նրանց հետ համատեղ ուսուց ման ընթացքում՝ առանց ընտանիքից կտրվելու:

Գոյություն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգ ներգրավելու մի քանի ձևեր: Դրանցից են՝

- Նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո, երբ նա հասցնում է բավարար մակարդակով յուրացնել ուսուցման հանրակրթական ծրագիրը, տեղափոխվում է հանրակրթական համակարգ:
- Ներառական ուսուցում, որը ենթադրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մուտքը հանրակրթական հաստատություն՝ համատեղ ուսուցումը շարունակելու սովորական խմբում /կամ դասարանում/ իր հասակակիցների հետ միասին:

Փորձենք ներկայացնել այն կարևոր գործոնները, որոնք անհրաժեշտ են ներառական կրթության մասին գաղափար կազմելու համար:

1. Ներառական կրթությունը ենթադրում է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և մյուս երեխաների ուսուցումը նույն խմբում /կամ դասարանում/ և, ընդհանրապես, նրանց ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը հասարակական կյանքին:

2. Անհրաժեշտ է հատուկ ծառայությունների հուսալի աջակցություն:

Այդ կերպ հատուկ կարիքներով երեխաները հաջողությամբ կիրականացնեն իրենց առջև դրված նպատակները, որոնք հստակեցվել և մշակվել են դաստիարակների, ուսուցիչների և մասնագետների կողմից:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացմանն աջակցող ծառայություններն իրականացվում են տարբեր մասնագետների սերտ համագործակցությամբ:

4. Ներառումը /ինտեգրումը/ ենթադրում է նաև հատուկ կարիքներով երեխաների ակտիվ այցելություն հասարակական տարբեր վայրեր /խանութ, զբոսայգի, շուկա և այլն/, նրանց մասնակցությունը տարբեր միջոցառումներին:

Ներառական ուսուցումը հնարավորություն է տալիս լիարժեք կերպով զարգացնել երեխաների անհատական կարողությունները, ապահովել նրանց սոցիալականացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին և, ի վերջո, օգնել, որ իրենց ուժերի սահմաններում բարձրացնեն սեփական կենսամակարդակը:

Բազմակողմանի ուսումնասիրության են ենթարկվել ներառական ուսուցման մեջ ընդգրկված բնականոն զարգացմամբ երեխաները: Այստեղ առաջին անգամ ապացուցվել է, որ ներառական ուսուցումը ոչ մի վնասակար ազդեցություն չի թողնում այդ երեխաների վրա: Ընդհակառակը, նրանք դառնում են ավելի հանդուրժող, զգայուն՝ դիմացինի կարիքների նկատմամբ, գթասիրտ, միջանձնային հարաբերություններում՝ առավել ճկուն:

Գաղտնիք չէ, որ ինչքան վաղ է սկսվում երեխայի հետ աշխատանքը, այնքան լիարժեքորեն է նա կարողանում օգտագործել իր ներուժը: Իսկ մանկապարտեզն այն կրթօջախն է, ուր երեխան բավարարում է իր սոցիալական պահանջմունքները:

Ներառական նախադպրոցական հաստատությունը նոր տիպի կրթական հաստատություն է, որն իր առջև դնում է յուրաքանչյուր երեխայի կող մից սոցիալական փորձի առավելագույն կուտակման խնդիրներ: Դրանց ձեռք բերումը հետագայում որոշում է շրջապատող աշխարհի այն հնարավոր մակարդակները, որոնց նա կարող է հարմարվել: Եվ ներառական մանկապարտեզում գործող մասնագիտական թիմի շնորհիվ յուրաքանչյուր երեխայի համար կառուցվում է յուրովի երթուղի, որոշակի շղթա, որի ամեն մի օղակում՝ երեխայի վիճակին համապատասխան, ինտեգրատիվ տարածության շրջանակներում, նրա կողմից ձեռք է բերվում անհրաժեշտ սոցիալա-կան փորձ: Ուստի ներառական հաստատություններում հարմարումը հիմնված է յուրաքանչյուր երեխայի դինամիկ և երկարատև ախտորոշման վրա: Իսկ ինտեգրված տարածության ամեն մի հաջորդ օղակն է երեխայի հնարավորությունների հետագա

լայնացման և նրա կրթական մակարդակի բարձրացման աստիճանը: Այստեղ երեխան անմիջապես հայտնվում է զանազան մասնագետների հսկողության տակ:

Գրականություն

1. Екжанова Е. А. Основы интегрированого обучения, Москва 2008г.
2. Мастюкова Е. М. Лечебная педагогика. Ранний и дошкольный возраст. Советы педагогам и родителям по подготовке к обучению детей с особыми проблемамаи развития. Москва 1997г.
3. Назарова Н. М. Закономерности развития интеграции, как социального и педагогического феномена, Москва, 1996.
4. https://docs.yandex.ru/docs/view?tm=1671377173&tld=ru&lang=hy&name=dasagirq_nerarakan.pdf&text=Համընդհանուր%20ներառական%20կրթության%20կազմակերպման%20առանձնահատկությունները%20մանկապարտեզում&ur
5. https://www.ncsu.edu/ncsu/design/cud/about_ud/about_ud.htm
6. https://docs.yandex.ru/docs/view?tm=1671377173&tld=ru&lang=hy&name=Ներառական%20կրթության%20ռազմավարություններ.pdf&text=Համընդհանուր%20ներառական%20կրթության%20կազմակերպման%20առանձնահատկությունները%20մանկապարտեզում
7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113152
8. https://www.cmu.edu/teaching/assessment/assesslearning/conceptmaps.html
9. https://www.ncsu.edu/ncsu/design/cud/about_ud/about_ud.htm